ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի

14 մարտի 2014թ.

Նախագահ՝ Մ. Զաքարյան

Քարտուղար՝ Հ. Գասպարյան

Ներկա էին խորհրդի 8 անդամներ: Նիստին մասնակցում էր նաև ֆակուլտետի դասախոսական անձնակազմը և աշխատակիցներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. *Դեկանի հաշվետվություն:*

   /զեկ. Ա. Վ. Ցուցուլյան/

2. *2013-14թթ. ուստարվա ամփոփիչ ավարտական քննությունների և ավարտական աշխատանքների նախապատրաստություն:*

   /զեկ. Ա. Վ. Ցուցուլյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց «Բարձրագույն մաթեմատիկայի և ինֆորմատիկայի»ամբիոնի վարիչ Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ Ա. Վ. Ցուցուլյանը: Նա ներկայացրեց հաշվետվություն 2013-14թթ. ուստարվա I կիսամյակում իրականացված աշխատանքների մասին: Համաձայն տնօրինության կողմից հաստատված ուսումնական գործընթացի ժամանակացույցի իրականացվել են սահմանված բոլոր աշխատանքները: Ժամանակին կազմակերպվել և անց են կացվել I և II ընթացիկ ստուգումները, քննությունները, ստուգարքային շրջանը և քննաշրջանը: ՈՒսման վճարների մուծման պարտք չի գրանցվել:

ՈՒսումնական պարապմունքները իրականացվել են ըստ ուսումնական պլանի: Ֆակուլտետում կրճատվել են անհարգելի բացակայությունները, հեռացման ենթակա ուսանող չի եղել:

Նորացվել են ֆակուլտետում գործող լաբորատորիաները: Ստեղծվել է նաև թ.2 համակարգչային մասնագիտական լաբորատորիա:

Քննաշրջանի արդյունքներով ֆակուլտետում կան ,,4,, անբավարար առաջադիմություն ունեցող ուսանող /ԻԿՄ I և ԿՄՖ II կուրս/, որոնք մեկ առարկայից ունեն կրեդիտի պարտք, տրվել է լրացուցիչ ժամանակ վերահանձնելու համար:

Այնուհետև զեկուցող Ա. Վ. Ցուցուլյանը իր գոհունակությունը հայտնեց ֆակուլտետի դասախոսական անձնակազմի և աշխատակիցների մասին, որոնք նվիրումով են կատարում իրենց աշխատանքային պարտականությունները: ՈՒսումնական պրոցեսի հետ կապված աշխատանքների կատարումը և վերահսկողությունը իրականցվել է ֆակուլտետի դեկանատի և ամբիոնների համատեղ աշխատանքի շնորհիվ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Մ. Ա. Զաքարյանը, Ա. Զ. Ալավերդյանը, Է. Կ. Օսիպովան, Գ. Վ. Գուլակյանը: Նրանք համակարծիք էին ներկայացված նյութին և առաջարկեցին դեկանի և դեկանատի կատարած աշխատանքները գնահատել լավ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Դեկանի և դեկանատի կատարած աշխատանքները գնահատել լավ:

Օրակարգի երկրորդ հարցի մասին ֆակուլտետի խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը ներկայացրեց ամփոփիչ ավարտական քննությունների նախապատրաստման և ավարտական աշխատանքների կատարման ընթացքը:

Այդ ուղղությամբ կազմակերպվում են ակնարկային դասախոսություններ:

Նա հանձնարարեց ամբիոններին արագացնել ամփոփիչ ավարտական քննությունների և ավարտական աշխատանքների կատարման ընթացքի նախապատրաստական աշխատանքները և ներկայացնել նախապաշտպանության:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Մ. Ա. Զաքարյանը, Ա. Զ. Ալավերդյանը: Նրանք ընդգծեցին, որ ավարտական աշխատանքների կատարումն ընթացքի մեջ է:

ՈՐՈՇԵՑԻՆ-1. Հանձնարարել ամբիոններին ներկայացնել ավարտել ավարտական աշխատանքների կատարումը և ներկայացնել նախապաշտպանության:

2.Հանձնարարել դեկանատին վերահսկել հանձնարարականի կատարման ընթացքը:

3. Հանձնարարել ամբիոններին 28.03.2014թ. կազմակերպել ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը:

ՆԱԽԱԳԱՀ Ա. Վ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ